

եւ միեւնոյն ազգին պատկանող բանուորական զանգուածներուն մէջ: Բանուորական այլ եւ այլ խաւեր ծառայան իրարու դէմ, իրեւ թշնամի բանակներ, կանգ չառնելով նոյնիսկ արիւնհեղութեանց առջեւ: Եւ ասիկա դարձեալ պատահական երեւոյթ մը չէ, այլ ունի խորը հիմքեր շահերու, վիճակներու եւ ձգտումներու տարբերութեան մէջ:

Բանուոր դասակարգի շահերու ներգաշնակութեան ամենէն հեղինակաւոր եւ ամենէն ձեռնհաս գաղափարախօսը՝ Կ. Կառլցկին եւս անկարող է չխոստովանել, որ կայ բաւականին խոշոր տարբերութիւն մը բանուորութեան գէթ երկու խաւերու միջեւ, — մասնագէտ, վարժ, լաւ վարձատրուած եւ ապահով բանուորներու եւ անվարժ, գէշ վարձատրուող, սեւ աշխատանք կատարող եւ անստոյգ վիճակ ունեցող բանուորներու միջեւ: Եւ այս տարբերութեամբ է որ ան մասամբ կ'ուզէ բացատրել բանուորական բանակի երկու գլխաւոր մասերու բաժնուելը՝ կոմունիստներու եւ սոցիալիստներու, թէեւ գլխաւոր պատճառը կը վերագրէ դարձեալ բանուորութեան ստորին խաւի սպիտութեան:

Ահա թէ ի՞նչ կ'ըսէ Կ. Կառլցկին իր վերջին գրքին մէջ, որ լոյս տեսաւ ամիս մը առաջ «Պրոլետարական Յեղափոխութիւնը եւ Անոր Ծրագիրը» վերնագրով:

«Պրոլետարիատը (բանուորութիւնը) իր էութեան մէջ բոլորովին միատարր չէ: Մենք արդէն տեսանք, որ ան կը բաժնուի երկու խաւերու: Առաջինը առանձնաբար սպայ-մաններու եւ օրէնսդրութեան հետեւանքով այնքան նպաստաւոր վիճակ մը ունի, որ կազմած է գորեղ միութիւններ եւ անոնց միջոցով բաւականին յաջող կերպով կը պաշտպանէ իր շահերը. ան կը ներկայացնէ պրոլետարիատի վերին, բարգաւաճող մասը, անոր «ազնուականութիւնը», որ գիտէ յաջողութեամբ սպայ-քարել կապիտալիզմի ճնշող ձգտումներուն դէմ եւ երբեմն այնպիսի յաջողութեամբ, որ պայքարը կապիտալիզմի դէմ անոր համար կը դառնայ պայքար ոչ թէ աղքատութեան դէմ, այլ իշխանութեան համար: Այս լաւ կազմակերպուած, վարժուած, պայքարի ընդունակ բանուորութեան կողքին կանգնած է մեծ բանակը այն բանուորներու, որոնք այնպիսի

աննպաստ պայմաններու մէջ են դրուած, որ չեն կարողացել նոյնիսկ կազմակերպուել եւ յաղթահարել կապիտալիզմի ճնշող ձգտումները: Անոնք կը խարխափին աղքատութեան մէջ եւ միշտ աւելի խորը կերպով կ'ընկղմուին անոր ճահիճին մէջ»...

Հետաքրքիր է սակայն, թէ ի՞նչ դերք կը բռնեն բանուորութեան այս երկու խաւերը յեղափոխութեան ժամանակ: Մինչ առաջին խաւը ինքզինքը կը զսպէ, կը չարաւորէ եւ կը խուսափի յախուռն, վաղաժամ «յեղափոխական» քայլերէ ու ծայրայեղութիւններէ, երկրորդը, ընդհակառակը, կ'արտայայտուի հետեւեալ կերպով. —

«Պրոլետարական յեղափոխութիւնը, — կը շարունակէ Կառլցկին, — կը ցնցէ ե՛ւ այս խաւը, դարձնելով այն՝ արի եւ պայքարի ընդունակ: Ան, որ մինչեւ այդ անտարբերօրէն քարշ կուտար իր դոյութիւնը, ամենէն յախուռն կերպով առաջ կը նետուի: Անոր համար դասակարգային պայքարը ուղղուած է աղքատութեան դէմ: Աղքատութենէ ճզմուած՝ ան չի կարող սպասել. ան ստիպողական կարիք ունի անմիջական օգնութեան. ան կը համակերպէր, որքան ատեն որ ինքզինքը ուժասպառ կը զգար: Երբ իշխանութիւնը իր ձեռքը կ'անցնի, ան իսկոյն կ'ուզէ ազատուիլ իր բոլոր տառապանքներէն, մէկ անգամէն կ'ուզէ վերջ տալ իր ճնշուած վիճակին»... (Տես 87 էջ):

Ասոր հետեւանքը կ'ըլլայ այն, որ «պրոլետարական յեղափոխութեան ընթացքին բանուորութեան երկու խաւերը կ'իյնան իրարու հանդէպ հակամարտութեան մը մէջ, որ երբեմն արիւնհեղութեանց կը հասնի եւ արտաքինապէս կը յիշեցնէ բուրժուական յեղափոխութեան ատեն զանազան խմբակցութեանց միջեւ տեղի ունեցող կռիւները» (Տես էջ 92):

Հակամարտութիւնը, որու մասին կը խօսի Կ. Կառլցկի, բանուորութեան ծոցին մէջ ստացած է այսօր այնպիսի կատաղի ընոյթ, որ, առանց չափազանցելու, կարելի է ըսել, թէ բանուորական հակամարտ կազմակերպութիւնները՝ կոմունիստականներն, սոցիալիստականները եւ վերջերս նաեւ Փասչիստականները իրարու հանդէպ աւելի անհաշտելի ու թշնամական պայքար կը մղեն, քան նոյնիսկ